
Միջիլիական պաշտպանության սուր և հայտնի տարբերակներից է **շեննինգյան տարբերակը**: Տարբերակը բնութագրվում է սևերի կաշկանդված, բայց միևնույն ժամանակ ամուր ու հեռանկարային դիրքով: Ճկուն զինվորային կառուցածքը թույլ է տալիս նրանց ակտիվություն ցուցաբերել ինչես կենտրոնում(e7-e5 կամ d7-d5), այնպես էլ թագուհու թևում(b7-b5):

Տարբերակն իր անունը ստացել է հոլանդական Շեննինգեն(Միսեննինգեն) քաղաքի անունից: Համարվում է, որ տարբերակն առաջին անգամ կիրառվել է 1923 թվականին Շեննինգեն քաղաքում անցկացվող միջազգային մրցաշարում՝ Մարոցի-Էյվե պարտիայում:

Գլուխ №1

Կերեսի գրոհ


Ես սկսեցի այս տարբերակը կիրառել իմ պրակտիկայում, երբ դեռևս 14 տարեկան էի: Ահա իմ առաջին «փորձը»:

Պարտիա №1

Հ. Մկրտչյան-Ա. Նուրիջանյան

Երևան 2015













1.e4 c5 2.♘f3 e6 3.d4 cd 4.♗d4 ♘f6 5.♘c3 d6
6.g4 ...



















Այս քայլով սկսվում է սուր և հայտնի գրոհ,որը կրում է փորձառու,կոմբինացիոն ոճով գրոսմայստերի՝Պաուլ Կերեսի անունը:Գաղափարը շատ պարզ է.սպիտակները ցանկանում են հետ շարտել սևերի ձիուն իր սիրելի f6 դաշտից և հնարավորինս չափով շատ տարածություն գրավել արքայական թևում:

6. ... h6!

Մեր ժամանակների ամենաուժեղ ու մոդայիկ շարունակություններից մեկը,որի գլխավոր նպատակը g5 քայլի կասեցումն է:Կան նաև այլ շարունակություններ.

6. ...a6!? 7.g5 fd7 8.e3 b5 9.a3 b7 10.h4 b6 11.h5 8d7 12.g6! hg 13.hg h1 14.gf+ f7 15.f3 f6 16.h1 c4 17. c4 bc 18.0-0-0 +-

6. ... c6!? 7.g5 d7 8.e3 e7 9.h4 0-0 10.d2 a6 11.0-0-0 d4 12.d4 b5 13.h5! g5 14.h6 e3+ 15.e3 g6 16. d6 ±

6. ...e5?! 7.b5+ d7 8.d7+ d7 9.f5 h5 10.gh h5 11.h6! g6! 12.f8 gf 13.d6 +=

Անցնենք պարտիային.

7. ♖e3!? ...

Գլխավոր տարբերակները սկսվում են 7.h4 քայլով(կամ 7. ♖g1 հետո 8.h4)

7.h4 ♘c6 8. ♖g1 h5!(d5!) և այստեղ 9.g5 կամ 9.gh. Այս տարբերակները մենք ավելի խորը կուսումնասիրենք հաջորդ պարտիաներում:

Պարտիայում 7. ♖e3!? քայլին ես, խառնելով տարբերակները, խաղացի

7. ... ♘c6?!

Հիմնական տարբերակը՝ 7. ... a6 8.f4 ♘c6 9.h3 ♚c7 10. ♖g2 ♖e7 11. ♚d2 ♘a5! 12.b3 ♘c6 (ձիու ուսուցողական մանևր, որը խոցելի է դարձնում սպիտակների թագուհու թևը, թուլացնելով սև դաշտերը) 13.0-0-0 ♘d4 14. ♖d4 e5 15. ♖e3 ef 16. ♖f4 ♖e6 17. ♚he1-0-0 18. ♘e2 ♘e8

8. ♖e2 ...

Այստեղ մեր սկզբնախաղային իմացություններն ավարտվեցին և պարտիան անցավ «ստեղծագործական փուլ»:

8. ... ♘d4?!

Ես ցանկանում էի խաղալ a6 ու b5,ինչի համար էլ փոխանակեցի ձիերը,քայց 8. ...e5 քայլը միանգամից դիրքը հավասարեցնում էր (9.♘f5 h5! =)

9..♙d4 ...

Առավել ուժեղ էր 9. ♖d4!-ը միանգամից պատրաստելով երկար փոխաստեղծում. 9. ♖d4 e5(a6 10.f3 b5 11.0-0-0±)10. ♖a4+ ♙d7 11. ♖b3 ♙g4 12.f3 ♙e6 13. ♖b7±

9. ... a6 10.f3 b5 11.♖d2?!


Զգուշավոր էր 11.a3 քայլը,խանգարելով 11. ...b4-ին:

11. ... ♙e7?!

Ավելի ուժեղ էր 11. ...b4 և 12. ...♖b8 օգտվելով սպիտակների անզգուշությունից(11.a3):

12.0-0-0 ...

Դեռ ուշ չէր 12.a3 քայլին վերադառնալու համար:



Կարելի էր խաղալ 12. ...e5, 13. ...♔a5 կամ 12. ...♚d7: Իմ կատարած քայլը թույլ էր:

12. ... 0-0?

Սպիտակների համարյա բոլոր ուժերը կենտրոնացված են արքայական թևում և իմ արքան գնում է «հակառակորդիս գրոհին ընդառաջ»: Ես ուղղակի ցանկանում էի սրել դիրքը և հակառակորդիս ապացուցել, որ հաշվարկային խաղում իրենից ուժեղ եմ, չնայած փորձել դիրքը սրել սեփական արքային վատ պատսպարելով՝ անմտություն է: Այնուամենայնիվ այդպիսի խաղը վախկոտների համար չէ. արքան առանց տատանվելու գնում է դեպի պայթյուն, քայց ով խաղում է շեննինգյան տարբերակ պետք է պատրաստ

լինի դիմակայելու հարձակման, կարողանա լավ պաշտպանվել:

13.h4! ...

Հակառակորդս սկսում է գրոհ, սակայն մինչ գրոհ սկսելը առավել ուժեղ էր 13.a3! քայլը, սևերին զրկելով ...b4 հնարավորությունից:

13. ... ♘d7?(...b4 ±) 14.g5 h5 15.f4?

Այս քայլը թուլացնում է e4 զինվորին, a8-h1 անկյունագիծը, պակասեցնում սպիտակի առավելությունը: Ավելի ուժեղ կլինե՞ր 15.a3 կամ ♖hg1

15... g6??

Միանգամից պարտվում է: Պետք էր խաղալ 15. ...b4 16. ♘a4 ♙b7+=

16.f5! ...

Առավել ուժեղ ու էֆեկտիվ կլինե՞ր 16. ♙h5!! gh 17. ♚e2! e5 18. ♚h5 ed 19. ♘d5 ♘e5 20.fe ♙g4 21. ♚h6!(♚g4 ♙g7)+-

16. ... ♖e8 17. ♙h5! b4!

17. ...gh?-ին կհետևե՞ր 18.g6! կամ 18. ♚e2 ջախջախումով:



Առաջին էլեկտրոնային գրախանութը Հայաստանում

Գրքի ամբողջական տարբերակը կարդալու համար անհրաժեշտ է

զննել այն և ներբեռնել Ի-մ գրքերի բաժնից:

Անցնել գրքի էջ